Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 4148-Լ 16.12.2019թ.

ՀՐԱՄԱՆ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՊՄՀ-ՈՒՄ, ՀՊՄՀ-Ի ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ (ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ), ՀՊՄՀ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 26-ի նիստի N 8-Լ որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Օտարերկրյա կրթական հաստատությունների և ՀՊՄՀ-ի միջև ձեռք բերվող պայմանավորվածությունների հիման վրա, օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների համար ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում իրականացնել ոչ ֆորմալ լրացուցիչ կրթական դասընթացներ:

2. Օտարերկրյա կրթական հաստատությունների սովորող ունկնդրի համար ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում ուսումնառության ոչ ֆորմալ լրացուցիչ կրթական դասընթացների յուրաքանչյուր օրվա համար սահմանել վարձավճար 38000 (երեսուն ութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը և պարտադիր վճարները:

3. Սույն հրամանի 2-րդ կետը չի տարածվում ՀՊՄՀ-ում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում), ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում՝ միջազգային կրթական ծրագրերով և փոխադարձության սկզբունքով սովորող ունկնդիրների վրա:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից:

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ